ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 293
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի
ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքը (Նոր Գյուղ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ
(Ակունք համայնքի (Նոր Գյուղ բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքը (Նոր Գյուղ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-8 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքի (Նոր Գյուղ բնակավայրը) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
07-049-0275 կադաստրային ծածկագրով հողամասից 0.007 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող	07-049-0275 կադաստրային ծածկագրով հողամասից 0.007 հա մակերեսով էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ էներգետիկայի հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Նոր Գյուղ բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքի Նոր Գյուղ բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Լ.Առաքելյան

Երևան, «11» «սեպտեմբերի» 2025 թ.